

ՀՀ գյուղատնտեսության նախարարը՝ Վայոց ձորի մարզում

01.07.2013



ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հունիսի 28-ին աշխատանքային այցով Վայոց ձորում էր:

Նախարարը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի ուղեկցությամբ եղավ մարզի Ելփին, Ռինդ, Աղավնաձոր գյուղերում, որտեղ դիտարկեցին նշված գյուղերի հացահատիկի ցանքատարածությունները, խաղողի ու պտղատու այգիները:

Աղավնաձոր գյուղի մշակույթի տանը տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում էին Արենի, Ռինդ, Ելփին, Խաչիկ, Մալիշկա համայնքների, գինեգործական և վերամշակող կազմակերպությունների ղեկավարները:

Այնուհետև նախարարի մասնակցությամբ Վայոց ձորի մարզպետարանում տեղի ունեցավ խորհրդակցություն, նվիրված գյուղատնտեսության բնագավառի խնդիրներին:

Նախարարի աշխատանքային վերջին կանգառը Ազատեկ համայնքն էր, որտեղ նախարար Սերգո Կարապետյանը հանդիպեց կանանց կողմից ստեղծված գյուղացիական կոոպերատիվի անդամների հետ: Հանդիպմանը քննարկվեց կոոպերատիվի անդամներին հոգող և գյուղարտադրանքի սպառման հետ կապված հարցեր: